ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 12.11.2015թ. ստացվել է բողոք:

Բողոք բերող անձ՝ «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգ, ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի առարկան և պահանջը՝ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգեման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետի կատարումը կասեցնելու և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգեման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 7-1 արձանագրության 4-րդ կետը դադարեցնելու պահանջների մասին:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդված 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ